ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵՎ ԹԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ

2022 Թ. ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԲՈՒՀԵՐԻ ԲԱԿԱԼԱՎՐԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐՈՎ ՀԵՌԱԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՄՐՑՈՒՅԹԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

ԵՐԵՎԱՆ 2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱԲԱՆ ____ 2
I. ՀԵՌԱԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՄԻԱՄՆԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ____ 3
1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ____ 3
2. ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐ 2022 Թ. ՀԵՌԱԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՄԻԱՄՆԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ____ 5
3.4. ՄԻՋԻՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԸ ԸՍՏ ԴԻՄՈՐԴՆԵՐԻ ՄԵՌԱՅԻՆ ԿԱԶՄԻ ____ 6
II. ԲՈՒՀԵՐԻ ՀԵՌԱԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒՅԹԸ ____ 9
5. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԵՌԱԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒՅԹԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ____ 9
5.1 ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԵՌԱԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒՅԹԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԸՍՏ ԲՈՒՀԵՐԻ ____ 11
5.2 ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԵՌԱԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒՅԹԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԸՍՏ ՔՆՆԱԿԱՆ ԱՌԱՐԿԱՆԵՐԻ ____ 12
5.5 ՀԱՅՏԱԳՐՎԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ԴԻՄՈՐԴՆԵՐԻ ՄԵՌԱՏԱՐԻՔԱՅԻՆ ԿԱԶՄԸ ____ 20
5.6 ԱՄԵՆԱՊԱՀԱՆՋՎԱԾ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ____ 21
ԱՄՓՈՓՈՒՄ ____ 23
ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ ____ 25

ՆԱԽԱԲԱՆ

2022 թվականին ՀՀ պետական բուհերի հեռակա ուսուցման ընդունելության քննությունների և մասնագիտությունների հայտագրման, թեստային քննությունների կազմակերպման ու անցկացման, մրցույթի անցկացման գործընթացն առաջին անգամ իրականացրել է Գնահատման և թեստավորման կենտրոնը (ԳԹԿ)։ Ներբուհական ընդունելության քննությունները կազմակերպել և անցկացրել են բուհերը։

Հեռակա ուսուցման համակարգում ուսուցում կազմակերպելու համար պետական բուհերին հատկացվել է 7726 վճարովի տեղ։ Հատկացված տեղերի 80%-ի մրցույթն անցկացրել է ԳԹԿ-ն, 20%-ը՝ բուհերը։ Վերջինները նախօրոք կազմակերպել են նախապատրաստական դասընթացներ, որոնց ավարտին անցկացրել են ավարտական քննություններ, և դրանց արդյունքներով անցկացրել ընդունելության մրցույթը։

Դիմորդներն ընդունելության մրցույթին մասնակցելու համար կա՛մ հանձնել են քննություն, կա՛մ, պահպանելով տվյալ առարկայի քննությունից նախկինում ունեցած միավորը, երկրորդ անգամ հանձնել քննություն, կա՛մ պահպանել են ունեցած միավորը։ Մրցույթի անցկացման ժամանակ հաշվի է առնվել նախկին և ներկա միավորներից առավել բարձրը։

ԳԹԿ-ի պաշտոնական կայքում և զանգվածային լրատվամիջոցներով հեռակա ուսուցման ընդունելության վերաբերյալ պարբերաբար ներկայացվել են միասնական քննություններին և ընդունելության մրցույթին վերաբերող տեղեկություններ։

2022 թվականի ՀՀ բուհերի բակալավրի կրթական ծրագրով հեռակա ուսուցման ընդունելության քննությունների և մրցույթի արդյունքների վերաբերյալ ԳԹԿ-ի իրականացրած վերլուծությունը հանրակրթության ոլորտի մասնագետներին և կրթության խնդիրներով հետաքրքրվող անհատների լայն շրջանակին է ներկայացնում ս/թ հոկտեմբեր ամիսին անցկացված ընդունելության քննությունների և բուհերի ընդունելության մրցույթի արդյունքները։

Վերլուծության առաջին մասում ներկայացված են ընդունելության քննությունների, երկրորդ մասում՝ բուհերի ընդունելության մրցույթի արդյունքները։

I. ՀԵՌԱԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

«Հայաստանի Հանրապետության պետական և հավատարմագրված ոչ պետական բարձրագույն ուսումնական հաստատություններում բակալավրի կրթական ծրագրով հեռակա ուսուցման ընդունելության կանոնների»[1] համաձայն, 2022 թ. ՀՀ պետական բուհերի հեռակա ուսուցման ընդունելության քննությունների և մասնագիտությունների հայտագրումն իրականացվել է ԳԹԿ dimord.am կայքում՝ սեպտեմբերի 5-25-ն ընկած ժամանակահատվածում: Հոկտեմբերի 20-ից 27-ն անցկացվել են միասնական քննությունները:

Դիմորդները դիմում-հայտում լրացրել են մեկ բուհի մինչև երեք մասնագիտության անվանում, որոնց համար սահմանված են եղել ընդունելության միևնույն քննությունները: «Ընդունելության քննություններ» բաժնի այունակում միասնական քննությունների առարկաները «կամ» բառով տարանջատված լինելու դեպքում դիմորդներին թույլատրվել է ընտրել նշված քննություններից մեկը:

Միասնական քննությունները կազմակերպվել և անցկացվել են քննական կենտրոններում, որոնց ցանկը մինչև 2022 թ. հոկտեմբերի 5-ը հաստատել է ԳԹԿ տնօրենը: Քննությունների անցկացման գործընթացին մասնակցել են քննական կենտրոնի ղեկավարը, ԳԹԿ ներկայացուցիչները, քննության ընթացքի կազմակերպիչները, համակարգչային օպերատորը, քննական կենտրոնի հերթապահը, որոնք իրենց աշխատանքը քննությունների ընթացքում իրականացրել են ԳԹԿ տնօրենի կողմից հաստատված աշխատակարգերի համաձայն:

Հեռակա ուսուցման ընդունելության քննություններ հանձնելու նպատակով dimord.am կայքում միասնական և ներբուհական քննություններ են հայտագրել Հայաստանի, Արցախի և արտերկրի 3795 դիմորդներ, որոնցից 3204-ը՝ միասնական, 591-ը՝ ներբուհական քննություններ հանձնելու համար: Վերջիններից 555-ը դիմում-հայտում նշել են երկու ներբուհական քննություն, իսկ 36-ը (ՀՖԿՍՊԻ-ի դիմորդներ) ներբուհական մեկ քննության հետ միասին հայտագրել են մեկ միասնական քննություն: Հետևաբար, մեկ կամ երկու միասնական քննություն է հայտագրել 3240 դիմորդ:

Հայտագրված դիմորդներից 3727-ը եղել են Հայաստանի, 40-ը՝ Ռուսաստանի, 20-ը՝ Արցախի, 2-ը՝ Վրաստանի, 6-ը՝ այլ երկրների քաղաքացիներ:

Հայտագրված դիմորդներից 2446-ը եղել են 2022 թվականի շրջանավարտներ (ՀՀ-ից 2394, Արցախից 13, ՌԴ-ից 32, Վրաստանից 2, այլ երկրներից 5 դիմորդ), 1349-ը՝ նախորդ տարիների (ՀՀ-ից 1333, Արցախից 7, ՌԴ-ից 8, Լիբանանից 1), որոնցից 327-ը դպրոցն ավարտել է 2021 թվականին (ՀՀ-ից 317, Արցախից 4, ՌԴ-ից 6): Դիմորդներից ամենաավագը եղել է 1985 թվականի շրջանավարտ:

Միասնական քննություններն անցկացվել են 15 քննական կենտրոններում՝ «Հայոց

[1] https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=166688

լեզու և հայ գրականություն», «Մաթեմատիկա», «Օտար լեզու» (անգլերեն, գերմաներեն, ֆրանսերեն, իսպաներեն), «Ռուսաց լեզու», «Քիմիա», «Կենսաբանություն», «Աշխարհագրություն», «Ֆիզիկա» և «Հայոց պատմություն» առարկաներից: Քննությունների ժամանակացույցը ներկայացված է հետևյալ աղյուսակում:

Աղյուսակ 1. 2022 թ. հեռակա ուսուցման ընդունելության միասնական քննությունների ժամանակացույցը

Քննությունը	Տևողությունը (ժամ)	Քննության օրը
Քիմիա **Ռուսաց լեզու**	3 2.5	21.10.2022 թ.
Հայոց լեզու և հայ գրականություն	3	22.10.2022 թ.
Մաթեմատիկա	3	23.10.2022 թ.
Օտար լեզու	2.5	25.10.2022 թ.
Կենսաբանություն **Աշխարհագրություն**	3	26.10.2022 թ.
Հայոց պատմություն **Ֆիզիկա**	3	27.10.2022 թ.

Հեռակա ուսուցման ընդունելության քննությունները, առկա ուսուցման նմանությամբ, անցկացվել են առարկայական թեստերի 4-ական տարբերակով, որոնք կազմված են եղել ընտրովի և կարճ պատասխաններով առաջադրանքներից, առարկաների մի մասի դեպքում՝ նաև պնդումների փնջերից:

Գնահատումը կատարվել է 20 միավորային սանդղակով, որում դրական են համարվում 7.5 և ավելի միավորները: Ընտրովի և կարճ պատասխանով յուրաքանչյուր առաջադրանքի ճիշտ պատասխանի համար ըստ այդ սանդղակի տրվել է 0.25 միավոր: Պնդումների փնջի յուրաքանչյուր պնդման ճիշտ պատասխանի համար տրվել է 0.25 միավոր, յուրաքանչյուր սխալ պատասխանի դեպքում տվյալ փնջին տրվելիք միավորներից հանվել է 0.25 միավոր: «Չգիտեմ» պատասխանի դեպքում միավոր չի տրվել և չի հանվել: Պնդումների փնջին միավոր չի տրվել նաև տվյալ փնջի միավորների գումարի արդյունքում ստացված բացասական թվի կամ 0-ի դեպքում: Այլ առաջադրանքներից հավաքած միավորների վրա տվյալ փնջի միավորները չեն ազդել:

2. ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐ 2022 Թ. ՀԵՌԱԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Աղյուսակ 2-ում ըստ քննական առարկաների ներկայացված են 2022 թ. բուհերի հեռակա ուսուցման ընդունելության քննությունների մասնակիցների թվերը[2], միջին[3] միավորները, ինչպես նաև դրական միավորի շեմը չհաղթահարած և 18-20 միավոր հավաքած դիմորդների թվերը և տոկոսները:

Աղյուսակ 2. 2022 թ. հեռակա ուսուցման ընդունելության քննությունների ընդհանուր արդյունքները

Քննական առարկաները	Հայտագրված-ների թիվը	Մասնակից-ների թիվը	Միջին միավորը	Առավելագույն միավորը	Դրական միավորի շեմը չհաղթահարած դիմորդների		18-20 միավոր հավաքած դիմորդների	
					թիվը	տոկոսը	թիվը	տոկոսը
Մաթեմատիկա	1264	1084	6.9	18.25	628	57.9	1	0.1
Հայոց լեզու և հայ գրականություն	1182	1072	7.6	19	567	52.9	4	0.4
Անգլերեն	609	513	8.3	18.75	234	45.6	6	1.2
Ֆիզիկա	351	237	4.9	16.5	196	82.7		
Կենսաբանություն	263	194	6.9	17	112	57.7		
Հայոց պատմություն	238	195	8.9	19.5	72	36.9	7	3.6
Ռուսաց լեզու	160	144	7.9	16.5	68	47.2		
Քիմիա	100	83	5.6	15.3	62	74.7		
Աշխարհագրություն	41	29	9.3	16	5	17.2		
Ֆրանսերեն	7	7	10.2	13.75	1	14.3		
Գերմաներեն	4	4	5.1	7	4	100		
Իսպաներեն	1	1	13.25	13.25				

Ինչպես տեսնում ենք, հայտագրված և քննություն հանձնած դիմորդների ամենամեծ թվով աղյուսակի առաջին հորիզոնականը զբաղեցրել է մաթեմատիկան (համապատասխանաբար՝ 1264 և 1084 դիմորդ):

Միասնական քննությունների միջին միավորները բաշխվել են 4.9-ից (ֆիզիկա) մինչև 10.2 (ֆրանսերեն) սահմաններում: Դրական միավորի շեմը չհաղթահարած դիմորդների ամենաբարձր տոկոսն արձանագրվել է ֆիզիկայից (82.7%): Այդ շեմից ցածր միջին միավորներ են արձանագրվել մաթեմատիկայից, ֆիզիկայից, կենսաբանությունից, քիմիայից և գերմաներենից: Բոլոր քննություններից «Անբավարար» գնահատական ստացած դիմորդների տոկոսը 10-ից բարձր է եղել: 18-20 միավոր ամենաշատը հավաքել են հայոց պատմություն հանձնած դիմորդները (3.6%), իսկ ընդհանուր առմամբ այդ միջակայքում միավորներ են արձանագրվել միայն հայոց պատմությունից, անգլերենից, հայոց լեզվից և հայ գրականությունից ու մաթեմատիկայից:

[2] **Մասնակիցների թվից** կախված է միջին միավորի հուսալիությունը. մասնակիցների թվի մեծ լինելը նպաստում է ստանդարտ շեղման նվազմանը, որի արդյունքում միջին միավորը դառնում է հուսալի:

[3] **Միջին միավորը** բնութագրում է քննություն հանձնողների պատրաստվածության միջին մակարդակը:

Աղյուսակ 3-ում ըստ քննական առարկաների և դիմորդների քաղաքացիության ներկայացված են միասնական քննությունների մասնակիցների թվերը և միջին միավորները: Մասնակիցների թիվը ներառում է այն դիմորդներին, որոնք դիմում-հայտի «Քննություններ» դաշտում քննական առարկայի համապատասխան սյունակում նշել են «Հանձնում եմ» և «Հանձնում և պահպանում եմ», այսինքն, քննություն են հայտագրել՝ միաժամանակ պահպանելով տվյալ առարկայի քննությունից նախկինում ստացած միավորը:

Աղյուսակ 3. Քննություն հանձնած և քննության նախկին միավորը պահպանած դիմորդների թվերը և միջին միավորները* ըստ քաղաքացիության

Քննական առարկաները		Մաթեմատիկա	Հայոց լեզու և հայ գրականություն	Անգլերեն	Ֆիզիկա	Կենսաբանություն	Հայոց պատմություն	Ռուսաց լեզու	Քիմիա	Աշխարհագրություն	Ֆրանսերեն	Գերմաներեն	Իսպաներեն
ՀՀ	Մասնակիցների թիվը	1064	1060	501	232	193	192	141	83	27	7	3	1
	Միջին միավորը	6.9	7.6	8.3	4.8	6.9	8.9	7.9	5.6	9.4	10.2	5.4	13.25
Արցախ	Մասնակիցների թիվը	4	7	7	1		1	1					
	Միջին միավորը	7.5	6.8	6.6	11		3.25	13.75					
ՌԴ	Մասնակիցների թիվը	14	5	3	2	1	2	2		2			
	Միջին միավորը	7.4	7.7	9.6	7.5	5.5	14.3	9.3		8.4			
ԱՄՆ	Մասնակիցների թիվը	2		2									
	Միջին միավորը	7.5		11.6									
Մասնակիցների ընդհանուր թիվը		**1084**	**1072**	**513**	**237**	**194**	**195**	**144**	**83**	**29**	**7**	**3**	**1**

*- Եթե քննությանը մասնակցել է 1 դիմորդ, ապա նրա ցուցանիշը չի համեմատվել միջին միավորի հետ:

3.4. ՄԻՋԻՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԸ ԸՍՏ ԴԻՄՈՐԴՆԵՐԻ ՍԵՌԱՅԻՆ ԿԱԶՄԻ

2022 թ. հեռակա ուսուցման միասնական մեկ կամ երկու քննություն է հանձնել 2514 դիմորդ (իգական սեռի՝ 1257, արական սեռի՝ 1257): Նրանցից 2022 թ. շրջանավարտ են եղել 1703-ը (896 իգական (այդ սեռի բոլոր մասնակիցների 71.3%-ը) և 807 արական (այդ սեռի բոլոր մասնակիցների 64.2%-ը) սեռի): 2021 թ. 227 շրջանավարտներից 143-ը եղել են իգական, 84-ը՝ արական սեռի: Ընդունելության քննություն հանձնած իգական սեռի դիմորդներից ամենաավագը եղել է 1955 թ. ծնված, արական սեռինը՝ 1972 թ.:

Աղյուսակ 4-ում ըստ դիմորդների սեռերի ներկայացված են ընդունելության քննությունների մասնակիցների թվերը և միջին միավորները: Առանձին տողերով ներկայացված են քննություն հանձնած, նախկինից ունեցած միավորը պահպանած,

միավորը պահպանելով քննություն հանձնած և բուհերի նախապատրաստական դասընթացներին մասնակցած դիմորդների խմբերի ցուցանիշները: Աղյուսակում մգացված են միասնական քննություն հանձնածների և ունեցած միավորը պահպանելով քննություն հանձնածների՝ յուրաքանչյուր քննության ընդհանուր միջին միավորը գերազանցող ցուցանիշների վանդակները: Ընդհանուր միջին միավորը հաշվարկվել է հիշատակված երկու խմբերի քննությունների արդյունքներից, այդ իսկ պատճառով մյուս երկու խմբերի արդյունքների չեն համեմատվել վերոհիշյալ ընդհանուր միջին միավորների հետ: Ավելի տեսանելի դարձնելու նպատակով յուրաքանչյուր խմբի առավելագույն միավորի վանդակն առնված է հոծ հաստ գծով շրջանակի մեջ, նվազագույն միավորինը՝ հաստ կետագծով շրջանակի մեջ:

Աղյուսակ 4. 2022 թ. միասնական քննությունների միջին միավորները ըստ դիմորդների սեռերի*

Խմբերը՝ ըստ քննության միավորը մրցույթի ժամանակ կիրառելու ձևի	Իգական սեռ		Արական սեռ	
	Մասնակից-ների թիվը	Միջին միավորը	Մասնակից-ների թիվը	Միջին միավորը
Հայոց լեզու և հայ գրականություն				
Հանձնել են քննություն	613	8.1	438	6.7
Պահպանել են նախորդ միավորը	335	11.1	90	10.4
Պահպանել են միավորը և հանձնել քննություն	16	12.5	5	11.1
Մասնակցել են նախապատրաստական դասընթացներին	59	11.2	115	11.0
Անգլերեն				
Հանձնել են քննություն	303	8.4	201	7.9
Պահպանել են նախորդ միավորը	194	12.4	123	11.4
Պահպանել են միավորը և հանձնել քննություն	6	14.5	3	15
Մասնակցել են նախապատրաստական դասընթացներին	39	11.1	75	10.6
Մաթեմատիկա				
Հանձնել են քննություն	331	8	748	6.3
Պահպանել են նախորդ միավորը	64	10.1	199	10.3
Պահպանել են միավորը և հանձնել քննություն	1	10.75	4	10.6
Մասնակցել են նախապատրաստական դասընթացներին	95	9.9	359	9.4
Կենսաբանություն				
Հանձնել են քննություն	148	7.2	44	5.7
Պահպանել են նախորդ միավորը	30	10.5	2	10.8
Պահպանել են միավորը և հանձնել քննություն	1	9.25	1	13.5
Մասնակցել են նախապատրաստական դասընթացներին	21	10.5	35	9.0
Հայոց պատմություն				
Հանձնել են քննություն	86	8.3	90	8.3
Պահպանել են նախորդ միավորը	38	13.9	36	13.2
Պահպանել են միավորը և հանձնել քննություն	13	14.4	6	15.8
Մասնակցել են նախապատրաստական դասընթացներին	13	10.9	14	10.9
Քիմիա				
Հանձնել են քննություն	58	6.2	24	4.0

Պահպանել են նախորդ միավորը	5	11.1	2	8.9
Պահպանել են միավորը և հանձնել քննություն	1	14.75		
Մասնակցել են նախապատրաստական դասընթացներին	17	9.4	30	9.1
Ֆիզիկա				
Հանձնել են քննություն	24	6.1	211	4.8
Պահպանել են նախորդ միավորը	4	8.1	29	9.9
Մասնակցել են նախապատրաստական դասընթացներին	18	9	133	8.9
Ռուսաց լեզու				
Հանձնել են քննություն	100	8	42	7.5
Պահպանել են նախորդ միավորը	13	11.8	10	9.4
Պահպանել են միավորը և հանձնել քննություն	1	13	1	18
Մասնակցել են նախապատրաստական դասընթացներին			1	8.25
Աշխարհագրություն				
Հանձնել են քննություն	16	9.8	13	8.6
Պահպանել են նախորդ միավորը	13	12.2	5	12.6
Գերմաներեն				
Հանձնել են քննություն	1	7	2	4.6
Պահպանել են նախորդ միավորը	3	12.1	1	10.25
Ֆրանսերեն				
Հանձնել են քննություն	6	9.8	1	12.25
Պահպանել են նախորդ միավորը	3	12.4		
Իսպաներեն				
Հանձնել են քննություն	1	13.25		

*- Եթե քննությանը մասնակցել է 1 դիմորդ, ապա նրա արդյունքը չի համեմատվել միջին միավորի հետ:

Աղյուսակ 4-ից երևում է, որ իգական սեռի հավաքած միջին միավորները հիմնականում բարձր են եղել տվյալ քննության ընդհանուր միջին և արական սեռի հավաքած միջին միավորներից:

«Հանձնել են քննություն» խմբի դիմորդների միջին միավորներն ընդհանուր առմամբ ցածր են եղել «Պահպանել են նախորդ միավորը» խմբի միջին միավորներից: Քննություն հանձնած դիմորդների խմբում իգական սեռի դիմորդների ամենաբարձր միջին միավորն արձանագրվել է աշխարհագրությունից և գերմաներենից (9.8), ամենացածրը՝ ֆիզիկայից (6.1), արական սեռինը, համապատասխանաբար, աշխարհագրությունից (8.6) և քիմիայից (4):

«Պահպանել են նախորդ միավորը» խմբում երկու սեռերի ամենաբարձր միջին միավորն արձանագրվել է հայոց պատմությունից (իգական սեռ՝ 13.9, արական սեռ՝ 13.2): Իգական սեռի ամենացածր միջին միավորն արձանագրվել է ֆիզիկայից (8.1), արական սեռինը՝ քիմիայից (8.9):

«Պահպանել են միավորը և հանձնել քննություն» խմբի իգական սեռի ամենաբարձր միջին միավորն արձանագրվել է անգլերենից, արական սեռինը՝ հայոց պատմությունից: Ամենացածր ցուցանիշը երկու սեռերի դեպքում էլ արձանագրվել է հայոց լեզվից և հայ գրականությունից (իգական սեռ՝ 12.5, արական սեռ՝ 11.1):

«Մասնակցել են նախապատրաստական դասընթացներին» խմբի երկու սեռերի ամենաբարձր միջին միավորն արձանագրվել է հայոց լեզվից և հայ գրականությունից

(իգական սեռ՝ 11.2, արական սեռ՝ 11.0), ամենացածրը՝ ֆիզիկայից (իգական սեռ՝ 9, արական սեռ՝ 8.9)։

Աղյուսակում ըստ խմբերի արձանագրված ամենաբարձր միջին միավորը եղել է անգլերենից՝ 14.5 («Պահպանել են միավորը կամ հանձնել քննություն» խմբում), ամենացածրը՝ քիմիայից՝ 4 («Հանձնել են քննություն» խմբում)։

II. ԲՈՒՀԵՐԻ ՀԵՌԱԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒՅԹԸ

5. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԵՌԱԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒՅԹԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

➢ ***Հայտագրում***[4]

2022-2023 ուսումնական տարում ՀՀ բուհերում բակալավրի կրթական ծրագրով հեռակա ուսուցման ընդունելության նպատակով պետության կողմից բուհերին տրամադրվել են 7726 վճարովի տեղեր։ Տեղերի նվազագույն քանակը հատկացվել է Երևանի պետական կոնսերվատորիայի Գյումրու մասնաճյուղի «Երաժշտական արվեստ» և «Գործիքային կատարողականություն-դաշնամուր» մասնագիտություններին՝ երկուական տեղ, առավելագույնը՝ ՀՊՏՀ «Ֆինանսներ» մասնագիտությանը՝ 190 տեղ։ Հայտագրման փուլի ավարտին ութ բուհերի (ԵՊԿ Գյումրու մասնաճյուղ, ԵԹԿՊԻ, ՀՖԿՍՊԻ, ՇՊՀ, ԳՊՀ (Գավառ), ԳՊՀ (Գորիս), ՃՇՀԱՀ) 17 մասնագիտություններ եղել են չհայտագրված, ոչ միայն առաջին, այլ նաև մյուս հայտերով։

ԳԹԿ-ն անցկացրել է այն մասնագիտությունների ընդունելության մրցույթը, որոնց համար սահմանված է եղել առնվազն մեկ միասնական քննություն։ Ներբուհական քննություններ պահանջող մանագիտություններ հայտագրած, ինչպես նաև բուհերի նախապատրաստական դասընթացներն ավարտած դիմորդների ընդունելության մրցույթն անցկացրել են բուհերը։

ԳԹԿ dimord.am կայքում սեպտեմբերի 5-ից մինչև 25-ը ներառյալ դիմորդները դիմում-հայտ են լրացրել՝ նշելով մեկ բուհի մինչև երեք մասնագիտություն, որոնց համար սահմանված են ընդունելության միևնույն քննությունները։ Դիմում-հայտում նշած մասնագիտությունների համար սահմանված յուրաքանչյուր քննության անվան դիմաց դիմորդները նշել են «Հանձնում եմ», «Պահպանում եմ», «Պահպանում եմ և հանձնում»։ Մրցույթի անցկացման ժամանակ «Հանձնում եմ» նշում կատարած դիմորդների դեպքում հաշվի են առնվել հեռակա ուսուցման ընդունելության նպատակով անցկացված քննությունների գնահատականները, «Պահպանում եմ» նշման դեպքում՝ կարգով սահմանված ժամկետում օգտագործման թույլատրված նախկին գնահատականները, «Պահպանում եմ և հանձնում» նշման դեպքում՝ նախկինում ունեցած և հեռակա ուսուցման նպատակով կրկին հանձնած քննության գնահատականներից առվել բարձրը։

[4] https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=166688

Հայտագրման փուլի ավարտին dimord.am կայքում հայտագրված է եղել 3795 դիմորդ, որոնցից 605-ը (15.9%) դիմում-հայտում նշում է կատարել 45-րդ կետի արտոնության[5] վերաբերյալ:

- ***Ընդունելություն***

Բուհերի հեռակա ուսուցման ընդունելության մրցույթն անցկացվել է ընդունելության դիմում-հայտի առաջին տողով ընտրված մասնագիտության գերակայությամբ: Առաջին հայտագրված մասնագիտության մրցույթով չանցած դիմորդների համար մրցույթն անցկացվել է դիմում-հայտում նշված մասնագիտությունների հերթականությանը համապատասխան, եթե դրանցում առկա են եղել թափուր տեղեր: Բուհ ընդունված դիմորդների ցուցակը կազմվել է տվյալ մասնագիտության համար սահմանված քննություններից հավաքած միավորների գումարի նվազման կարգով: Հեռակա ուսուցման ընդունելության մրցույթի արդյունքները հրապարակվել են 2022 թ. հոկտեմբերի 30-ին:

Հեռակա ուսուցման ընդունելության մրցույթի արդյունքում ընդունվել է 2063 (հայտագրվածների 54.4%-ը) դիմորդ: Հատկացված 7726 տեղերից թափուր է մնացել 5663-ը (73.3%):

Բուհ ընդունված 2063 դիմորդներից 1482-ն ընդունվել են ընդհանուր մրցույթով, 512-ը՝ բուհերի նախապատրաստական դասընթացների ավարտական քննությունների արդյունքներով (ընդունելության կանոնների 45-րդ կետի համաձայն), 69-ը՝ արտոնություններով (ընդունելության կանոնների 41-43-րդ կետերի համաձայն):

Հեռակա ուսուցման ընդունելության նպատակով անցկացված երկու միասնական քննություն հանձնելով ընդունվել է 778 դիմորդ, 526-ն ընդունվել է՝ պահպանելով ունեցած մեկ քննության միավորը և հանձնելով մեկ քննություն, 201 դիմորդ՝ պահպանելով երկու քննությունների միավորները, 32-ը հանձնել է երկու միասնական քննություն՝ միաժամանակ պահպանելով դրանց՝ նախկինից ունեցած միավորները, 14-ը պահպանելով մեկ քննության միավորը՝ հանձնել է մեկ միասնական քննություն, որի դեպքում նույնպես պահպանել է նախկին միավորը:

Ընդունելության երկու քննություններից ունեցած դրական գնահատականներով մրցույթից դուրս է մնացել 11 դիմորդ: Նրանցից ութը դիմում-հայտում նշած է եղել ԵՊՀ «Իրավագիտություն», մեկը՝ «Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա», մեկը՝ «Հանրային կառավարում» և մեկը՝ ՀՊՏՀ «Տեղեկատվական համակարգեր» մասնագիտությունները:

[5] «Հայաստանի Հանրապետության պետական և հավատարմագրված ոչ պետական բարձրագույն ուսումնական հաստատություններում բակալավրի կրթական ծրագրով հեռակա ուսուցման ընդունելության կանոնների» 45-րդ կետի համաձայն դիմորդի կողմից նախընտրած բուհի նախապատրաստական դասընթացներն ավարտած դիմորդները բուհ են ընդունվում մրցույթից դուրս, նախապատրաստական դասընթացների ավարտական քննությունների գնահատականներով, ըստ մասնագիտությունների (կրթական ծրագրերի) նախարարության կողմից հաստատված տեղերի մինչը 20%-ի չափով:

5.1 ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԵՌԱԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒՅԹԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԸՍՏ ԲՈՒՀԵՐԻ

Աղյուսակ 5-ում ներկայացված են 14 բուհերի և 5 բուհերի 8 մասնաճյուղերի հեռակա ուսուցման ընդունելության վերաբերյալ տեղեկություններ:

Աղյուսակ 5. 2022 թ. բուհերի հեռակա ուսուցման ընդունելության մրցույթի արդյունքներն ըստ բուհերի

Բուհը	Հայտագրված-ների թիվը	Հատկացված տեղերի թիվը	Ընդունվածներ					Թափուր մնացած տեղեր	
			թիվը	տոկոսը հայտագրված ցանկի վերջնական թվից	այդ թվում՝ 45-րդ կետի արտոնությամբ				
					թիվը	տոկոսը՝ տեղերի թվից	տոկոսը՝ ընդունվածների թվից	թիվը	տոկոսը՝ տեղերի թվից
ՀՊՏՀ	519	655	338	65.1	108	16.5	32.0	317	48.4
ՀՊՄՀ	475	1245	222	46.7				1023	82.2
ԵՊՀ	424	390	262	61.8	43	11.0	16.4	128	32.8
ՀԱԱՀ	339	980	207	61.1	196	20.0	94.7	773	78.9
ՀՖԿՍՊԻ	294	416	244	83.0				172	41.3
ՀԱՊՀ (Երևան)	249	375	126	50.6	40	10.7	31.7	249	66.4
ՇՊՀ	213	380	98	46.0				282	74.2
ՃՇՀԱՀ	203	835	87	42.9				748	89.6
ԲՊՀ	183	490	114	62.3				376	76.7
ՎՊՀ	150	310	68	45.3				242	78.1
ԵՊՀ Իջևանի մասնաճյուղ	121	250	45	37.2				205	82.0
ԳՊՀ (Գորիս)	107	275	55	51.4	50	18.2	90.9	220	80.0
ՀԱՊՀ Կապանի մասնաճյուղ	107	67	18	16.8	13	19.4	72.2	49	73.1
ԳՊՀ (Գավառ)	95	275	17	17.9				258	93.8
ՀՊՏՀ Գյումրու մասնաճյուղ	56	60	25	44.6	12	20.0	48.0	35	58.3
ՀԱԱՀ Վանաձորի մասնաճյուղ	47	180	33	70.2	32	17.8	97.0	147	81.7
ՀՌՀ	46	160	25	54.3				135	84.4
ՀԱՊՀ Վանաձորի մասնաճյուղ	45	57	14	31.1				43	75.4
ԵԹԿՊԻ	43	110	29	67.4				81	73.6
ՀԱԱՀ Սիսիանի մասնաճյուղ	42	120	18	42.9	18	15.0	100	102	85.0
ՀԱՊՀ Գյումրու մասնաճյուղ	27	40	10	37.0				30	75.0
ԵՊԿ Գյումրու մասնաճյուղ	10	56	8	80.0				48	85.7
Ընդամենը	3795	7726	2063	54.4	512	6.6	24.8	5663	73.3

Աղյուսակ 5-ի «Ընդամենը» տողում տեսնում ենք, որ հատկացված 7726 տեղերի համար հայտագրվել է 3759 դիմորդ, որոնցից 2063-ն է ընդունվել (հայտագրվածների 54.4%-ը): Ընդունվածներից 512-ն ընդունվել է նախապատրաստական դասընթացների ավարտական քննությունների արդյունքների հիման վրա բուհերի անցկացրած մրցույթով (45-րդ կետի արտոնությամբ), որով լրացվել է հատկացված տեղերի 6.6%-ը, և կազմել է ընդունվածների 24.8%-ը:

Հայտագրված և ընդունված դիմորդների ամենամեծ թիվն արձանագրվել է ՀՊՏՀ-ում (համապատասխանաբար՝ 519 և 338), ամենափոքրը՝ ԵՊԿ Գյումրու մասնաճյուղում (10 և 8)։

Այն բուհերում, որոնց մասնագիտությունների համար սահմանված են միասնական քննություններ, ընդունվածների ամենաբարձր՝ 70.2% է ունեցել ՀԱԱՀ Վանաձորի մասնաճյուղը, ամենացածր տոկոս՝ ՀԱՊՀ Կապանի մասնաճյուղը (16.8%)։

Նախապատրաստական դասընթացների ավարտական քննությունների արդյունքներով (45-րդ կետի արտոնությամբ) ընդունված դիմորդներ են ունեցել ՀՊՏՀ-ն՝ Գյումրու մասնաճյուղի հետ միասին, ՀԱՊՀ-ն՝ Կապանի մասնաճյուղի հետ, ՀԱԱՀ-ն՝ Վանաձորի և Սիսիանի մասնաճյուղերի հետ, ԵՊՀ-ն և Գորիսի պետական համալսարանը։ Հատկացված տեղերի 20%-ը 45-րդ կետի արտոնությամբ ամբողջովին լրացվել է ՀԱԱՀ-ում, ՀՊՏՀ Գյումրու մասնաճյուղում և ՀԱՊՀ Կապանի մասնաճյուղում (19.4%)։ ՀԱԱՀ Սիսիանի մասնաճյուղում բոլոր դիմորդներն ընդունվել են 45-րդ կետի արտոնությամբ։ Գորիսի պետական համալսարան, ՀԱԱՀ և նրա Վանաձորի մասնաճյուղ ընդունված դիմորդների ավելի քան 90%-ը նույնպես ընդունվել են այդ արտոնությամբ։ Այդ առումով ամենացածր տոկոս է արձանագրվել ԵՊՀ-ում (16.4%)։

Մրցույթի ամփոփումից հետո բուհերին հատկացված տեղերից թափուր է մնացել 32.8-ից (ԵՊՀ) մինչև 93.8 (Գավառի պետական համալսարան) տոկոսը։

5.2 ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԵՌԱԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒՅԹԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԸՍՏ ՔՆՆԱԿԱՆ ԱՌԱՐԿԱՆԵՐԻ

Աղյուսակ 6-ում ըստ քննական առարկաների ներկայացված են տվյալներ ՀՀ բուհերի հեռակա ուսուցման ընդունելության վերաբերյալ։ ԳԹԿ-ի անցկացրած քննությունների և ընդունելության մրցույթի վերաբերյալ տվյալներ ներկայացնելու նպատակով առանձնացվել են նախապատրաստական դասընթացների ավարտական քննությունների արդյունքներով բուհեր ընդունված դիմորդների տվյալները, քանի որ նրանք, ովքեր դիմում-հայտում քննական առարկայի անվան դիմաց նշել են «Հանձնում եմ» կամ «Պահպանում եմ և հանձնում»՝ միաժամանակ նշելով նաև 45-րդ կետի արտոնությունը, այնուհետև բուհի նախապատրաստական դասընթացների ավարտական քննությունների արդյունքներով մասնակցել են տվյալ բուհի անցկացրած մրցույթին և ընդունվել, այլևս չեն մասնակցել ԳԹԿ-ի կազմակերպած միասնական քննություններին։

Աղյուսակ 6. Վիճակագրական տվյալներ 2022 թ. հեռակա ուսուցման ընդունելության վերաբերյալ՝ ըստ դիմորդների հանձնած միասնական քննությունների

Քննական առարկան	Հայտագրվածների ընդհանուր թիվը (առանց 45-րդ կետի արտոնության) *	Հայտագրածների թիվը «Հանձնում եմ» և հանձնում» նշումներով	Քննության մասնակիցների թիվը	Ընդունված-ների թիվը			Միասնական 2 քննության դրական միավորներով մրցույթից դուրս մնացած դիմորդների թիվը	Հայտում քննության վերաբերյալ նշումը (առանց 45-րդ կետի)									Դրական միավորի շեմը չհաղթահարածներ	
				Առանց 45-րդ կետի	45-րդ կետով	Ընդամենը		Հանձնում եմ			Պահպանում եմ			Պահպանում եմ և հանձնում				
								Հայտագրվածներ	Ընդունվածներ	Տոկոսը	Հայտագրվածներ	Ընդունվածներ	Տոկոսը	Հայտագրվածներ	Ընդունվածներ	Տոկոսը	Թիվը	Տոկոսը
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17	18	19
Հայոց լեզու և հայ գրականություն	1607	1182	1071	684	174	858	3	1159	352	30.4	425	316	74.4	23	16	69.6	567	52.9
Մաթեմատիկա	1526	1264	1084	526	454	980	2	1257	348	27.7	262	175	66.8	7	4	57.1	628	57.9
Անգլերեն	926	609	513	500	114	614	5	598	227	38.0	317	263	83.0	11	11	100	234	45.6
Ֆիզիկա	384	351	237	66	151	217	2	351	40	11.4	33	27	81.8				196	82.7
Հայոց պատմություն	312	238	195	167	27	194	9	218	88	40.4	74	62	83.8	20	19	95.0	72	36.9
Կենսաբանություն	294	263	194	85	56	141		260	64	24.6	31	19	61.3	3	1	33.3	112	57.7
Ռուսաց լեզու	183	160	144	66	1	67	1	157	47	29.9	23	18	78.3	3	2	66.7	68	47.2
Քիմիա	106	100	83	26	47	73		99	20	20.2	6	4	66.7	1	1	100	62	74.7
Աշխարհագրություն	59	41	29	27		27		41	14	34.1	18	13	72.2				5	17.2
Ֆրանսերեն	10	7	7	8		8		7	5	71.4	3	3	100				1	14.3
Գերմաներեն	8	4	4	3		3		4			4	3	75.0				4	100
Իսպաներեն	1	1	1	1		1		1	1	100								

Աղյուսակ 6-ի առաջին տողի օրինակով մեկնաբանենք ներկայացված ցուցանիշները։ Դիմում-հայտի «Քննություններ» դաշտում «Հայոց լեզու և հայ գրականություն» առարկան նշել է 1607 դիմորդ (աղյուսակի 2-րդ սյունակ)՝ անկախ նրանից, թե քննություն հանձնելու վերաբերյալ ինչ նշում («Հանձնում եմ», «Պահպանում եմ», «Պահպանում եմ և հանձնում») է կատարել։

«Հանձնում եմ» և «Պահպանում եմ և հանձնում» նշումներով հայտագրվածների թիվը կազմել է 1182 դիմորդ (3-րդ սյունակ), որոնցից քննություն է հանձնել 1071-ը (4-րդ սյունակ)։ ԳԹԿ-ի անցկացրած մրցույթով «Հայոց լեզու և հայ գրականություն» առարկայի քննության գնահատականով (անկախ քննություն հանձնելու վերաբերյալ կատարած նշումներից) ընդունվել է 684 դիմորդ (5-րդ սյունակ), բուհերի անցկացրած մրցույթով՝ 174-ը (6-րդ սյունակ), երկու մրցույթը միասին՝ 858-ը (7-րդ սյունակ)։ «Հայոց լեզու և հայ գրականություն» առարկայի և մեկ այլ առարկայի քննություններից ստացած դրական գնահատականներով ընդունելության մրցույթից դուրս է մնացել 3 դիմորդ (8-րդ սյունակ)։

Երկրորդ սյունակում ներկայացված 1607 դիմորդներից 1159-ը քննական առարկայի անվանման դիմաց նշել է «Հանձնում եմ» (9-րդ սյունակ), որոնցից 352-ն է ընդունվել (10-րդ սյունակ), 425 դիմորդ նշել է «Պահպանում եմ» (12-րդ սյունակ), որոնցից ընդունվել է 316-ը (13-րդ սյունակ), 23-ը նշել է «Պահպանում եմ և հանձնում» (15-րդ սյունակ), որոնցից ընդունվել է 16-ը։ 11-րդ, 14-րդ և 17-րդ սյունակներում տոկոսները հաշվարկված են համապատասխան նշում կատարած դիմորդների թվից։ «Հայոց լեզու և հայ գրականություն» առարկայից դրական միավորի շեմը չի հաղթահարել 567 դիմորդ (18-րդ սյունակ), որը կազմել է քննության մասնակիցների թվի (4-րդ սյունակ) 52.9 տոկոսը։

Համեմատելով ըստ քննական առարկաների՝ տեսնում ենք, որ առանց 45-րդ կետի արտոնության հայտագրված դիմորդների ամենամեծ թիվն արձանագրվել է հայոց լեզվից և հայ գրականությունից, քննություն հանձնելու հայտ ներկայացրածներինը (3-րդ սյունակ)՝ մաթեմատիկայից։ Առանց 45-րդ կետի արտոնության ընդունվածներից ամենաշատը՝ 684 դիմորդ ընդունվել է՝ ունենալով հայոց լեզվի և հայ գրականության, ինչպես նաև մեկ այլ առարկայի քննության գնահատականներ։ Մինչդեռ 45-րդ կետի արտոնությամբ (բուհերի անցկացրած մրցույթով) ընդունվածների ծանրակշիռ մասը՝ 454 դիմորդ, ընդունվել է՝ ունենալով մաթեմատիկայի և մեկ այլ առարկայից բուհի նախապատրաստական դասընթացի ավարտական քննության գնահատականներ։

Միասնական երկու քննությունների դրական միավորներով ընդունելության մրցույթից դուրս մնացած 11 դիմորդներից (տես՝ էջ 10) 9-ը ունեցել են հայոց պատմության և մեկ այլ առարկայի քննության գնահատականներ։

Աղյուսակի 10-րդ և 13-րդ սյունակների ցուցանիշների դիտարկումից հետևում է, որ քննական գրեթե բոլոր առարկաների դեպքում ավելի մեծ թիվ են կազմել հեռակա ուսուցման ընդունելության նպատակով կազմակերպված միասնական քննությունների միավորներով ընդունված դիմորդները, քան ունեցած միավորը պահպանածները։ Հակառակ պատկերն է անգլերենի քննության դեպքում։ Գերմաներենի դեպքում երեք դիմորդ ընդունվել է այդ առարկայից ունեցած պահպանած միավորով։

Աղյուսակ 7-ում ներկայացված են յուրաքանչյուր բուհ ընդունված դիմորդների թվերն ու միջին միավորներն ըստ քննական առարկաների։ Աղյուսակի՝ յուրաքանչյուր բուհի բաժնում գունավորած են միասնական քննությունների և բուհերի նախապատրաստական դասընթացների ավարտական քննությունների՝ վիճակագրորեն նշանակալի ամենաբարձր միջին միավորների վանդակները։

Աղյուսակ 7. Ընդունված դիմորդների թիվը և միջին միավորները ըստ բուհերի և քննական առարկաների

Քննական առարկաները	Ընդունվածների ընդհանուր թիվը	ԳԹԿ մրցույթով ընդունվածների		45-րդ կետի արտոնությամբ ընդունվածների	
		թիվը	միջին միավորը	թիվը	միջին միավորը
ԵՊՀ					
Հայոց լեզու և հայ գրականություն	143	121	12.0	22	10.7
Անգլերեն	130	109	13.1	21	9.0
Հայոց պատմություն	116	99	13.6	17	10.8
Մաթեմատիկա	61	48	11.5	13	9.3
Կենսաբանություն	25	18	11.2	7	8.7
Քիմիա	20	14	9.7	6	10.4
Աշխարհագրություն	14	14	12.2		
Ռուսաց լեզու	5	5	11.6		
Ֆիզիկա	1	1	11.25		
Գերմաներեն	1	1	10.25		
Իսպաներեն	1	1	13.25		
ԵՊՀ Իջևանի մասնաճյուղ					
Հայոց լեզու և հայ գրականություն	42	42	10.3		
Անգլերեն	14	14	9.3		
Մաթեմատիկա	14	14	10.5		
Հայոց պատմություն	8	8	9.9		
Ռուսաց լեզու	6	6	8.4		
Կենսաբանություն	5	5	8.8		
Ֆրանսերեն	1	1	8.75		
ՀԱՊՀ (Երևան)					
Մաթեմատիկա	115	75	10.7	40	8.5
Ֆիզիկա	49	28	9.6	21	8.2
Անգլերեն	49	36	10.7	13	10.6
Հայոց լեզու և հայ գրականություն	15	9	8.6	6	9.4
Գծագրություն	11	11	9.2		
Գծանկար	11	11	10.6		
Ռուսաց լեզու	1	1	8		
ՀԱՊՀ Գյումրու մասնաճյուղ					
Մաթեմատիկա	10	10	11		
Ֆիզիկա	6	6	10.9		
Անգլերեն	3	3	8.9		
ՀԱՊՀ Վանաձորի մասնաճյուղ					
Մաթեմատիկա	14	14	9.7		
Հայոց լեզու և հայ գրականություն	7	7	10.3		
Ֆիզիկա	3	3	11.7		
Անգլերեն	3	3	9.3		

Ռուսաց լեզու	1	1	11.25		
ՀԱՊՀ Կապանի մասնաճյուղ					
Մաթեմատիկա	18	5	9.6	13	9.8
Ֆիզիկա	12	2	8.3	10	8.4
Հայոց լեզու և հայ գրականություն	5	2	8.9	3	8.1
Անգլերեն	1	1	8		
ՃՇՀԱՀ					
Գծագրություն	49	49	12.6		
Գծանկար (դիզայն)	49	49	12.3		
Մաթեմատիկա	31	31	9.6		
Անգլերեն	17	17	8.7		
Հայոց լեզու և հայ գրականություն	15	15	9.8		
Ֆիզիկա	9	9	9.9		
Աշխարհագրություն	3	3	10.4		
Ռուսաց լեզու	1	1	16.5		
ՀՊՏՀ					
Մաթեմատիկա	322	218	10.6	104	10.2
Հայոց լեզու և հայ գրականություն	174	112	10.9	62	11.3
Անգլերեն	167	119	12.2	48	11
Ռուսաց լեզու	5	4	9.9	1	8.25
Ֆիզիկա	3	2	9	1	12.75
Ֆրանսերեն	2	2	14		
Աշխարհագրություն	1	1	8.75		
ՀՊՏՀ Գյումրու մասնաճյուղ					
Մաթեմատիկա	25	13	10.5	12	10.2
Անգլերեն	15	7	12.2	8	10.4
Հայոց լեզու և հայ գրականություն	10	6	9.5	4	10.4
ՀՊՄՀ					
Հայոց լեզու և հայ գրականություն	125	125	10.7		
Անգլերեն	40	40	10.9		
Կենսաբանություն	39	39	10.0		
Դասական պար	33	33	11.7		
Մաթեմատիկա	32	32	9.9		
Հայկական ժողովրդական պար	31	31	11.1		
Ռուսաց լեզու	21	21	10.7		
Մասնագիտական հարցազրույց	19	19	13.5		
Հայոց պատմություն	16	16	10.1		
Գծանկար	16	16	11.3		
Գեղանկար	16	16	12.4		
Օպերատորության հիմունքներ	12	12	12		
Ֆիզիկա	10	10	9.1		
Նվագարաններով երաժշտական ստեղծագործության կատարում	9	9	10.7		
Երաժշտության տեսություն և սոլֆեջիո	9	9	10.6		
Գեղարվեստական լուսանկարչության հիմունքներ	7	7	14.3		
Քիմիա	4	4	12.9		

Աշխարհագրություն	3	3	12.1		
Ժամանակակից պարահանդեսային պար	2	2	11.5		
ԲՊՀ					
Հայոց լեզու և հայ գրականություն	114	114	10.6		
Անգլերեն	97	97	12.0		
Ռուսաց լեզու	11	11	10.8		
Ֆրանսերեն	3	3	11.8		
Գերմաներեն	2	2	13.1		
ՇՊՀ					
Ընդհանուր ֆիզիկական պատրաստականություն	46	46	9.6		
Հայոց լեզու և հայ գրականություն	44	44	9.6		
Մարդակազմություն և ֆիզիոլոգիա	25	25	9.1		
Մասնագիտական	21	21	8.8		
Մաթեմատիկա	16	16	10.7		
Անգլերեն	12	12	9.5		
Հայոց պատմություն	11	11	11.7		
Կենսաբանություն	7	7	8.4		
Աշխարհագրություն	5	5	11.3		
Ֆիզիկա	3	3	10.8		
Քիմիա	2	2	9.1		
Ռուսաց լեզու	2	2	9.4		
Ֆրանսերեն	2	2	9.4		
ՎՊՀ					
Հայոց լեզու և հայ գրականություն	48	48	10.6		
Անգլերեն	22	22	11.0		
Մաթեմատիկա	22	22	10.6		
Հայոց պատմություն	14	14	10.4		
Ռուսաց լեզու	7	7	12.4		
Ընդհանուր ֆիզիկական պատրաստականություն	6	6	11.5		
Մարդակազմություն և ֆիզիոլոգիա	6	6	8.8		
Կենսաբանություն	6	6	9.9		
Քիմիա	4	4	9.3		
Ֆիզիկա	1	1	8		
ԵՊԿ Գյումրու մասնաճյուղ					
Ծրագրի կատարում	6	6	16.5		
Երաժշտատեսական գիտելիքներ	6	6	15.2		
Երաժշտության տեսություն և սոլֆեջիո	2	2	10		
Նվագարաններով երաժշտական ստեղծագործության կատարում	2	2	15		
ԵԹԿՊԻ					
Հարցազրույց	15	15	12.3		
Պար	10	10	16		
Բալետի պատմություն	10	10	14.9		

Ռեժիսուրա և դերասանի վարպետություն	6	6	12.3		
Դերասանի վարպետություն	4	4	13.5		
Արվեստի կառավարում	4	4	14		
Ռեժիսուրա և հարցազրույց	4	4	10		
Լուսանկարչության հիմունքներ	3	3	14.7		
Ստեղծագործական շարադրություն	2	2	16		
ԳՊՀ (Գավառ)					
Հայոց լեզու և հայ գրականություն	14	14	10.3		
Հայոց պատմություն	7	7	9.4		
Մաթեմատիկա	5	5	10.1		
Անգլերեն	3	3	7.8		
Ռուսաց լեզու	2	2	9.5		
Կենսաբանություն	1	1	9.75		
Քիմիա	1	1	7.5		
Աշխարհագրություն	1	1	13.25		
ՀՖԿՍՊԻ					
Մասնագիտական	244	244	12.5		
Ընդհանուր ֆիզիկական պատրաստականություն	235	235	11.2		
Կենսաբանություն	9	9	11.8		
ՀԱԱՀ					
Մաթեմատիկա	203	11	9.9	192	8.9
Ֆիզիկա	81			81	8.9
Հայոց լեզու և հայ գրականություն	46	5	11.1	41	11.1
Կենսաբանություն	42			42	9.8
Քիմիա	24	1	8	23	8.4
Անգլերեն	17	4	12.8	13	12.1
Ռուսաց լեզու	1	1	9		
ԳՊՀ (Գորիս)					
Մաթեմատիկա	33	3	12.2	30	11.2
Հայոց լեզու և հայ գրականություն	28	2	8.9	26	11.2
Ֆիզիկա	18			18	8.7
Անգլերեն	15	4	12.1	11	11.8
Հայոց պատմություն	11	1	11.25	10	11
Քիմիա	5			5	10
ՀՌՀ					
Հայոց լեզու և հայ գրականություն	18	18	11		
Հայոց պատմություն	11	11	11		
Անգլերեն	9	9	12.0		
Մաթեմատիկա	8	8	10.3		
Ռուսաց լեզու	4	4	11.4		
ՀԱԱՀ Վանաձորի մասնաճյուղ					
Մաթեմատիկա	33	1	7.75	32	10.2
Ֆիզիկա	15	1	10	14	10.7
Քիմիա	13			13	9.8
Հայոց լեզու և հայ գրականություն	4			4	12.9

Կենսաբանություն	1			1	7.5
ՀԱԱՀ Սիսիանի մասնաճյուղ					
Մաթեմատիկա	18			18	9.2
Ֆիզիկա	6			6	9.3
Հայոց լեզու և հայ գրականություն	6			6	11.6
Կենսաբանություն	6			6	9.1

Աղյուսակում տեսնում ենք, որ բուհերում միասնական քննությունների՝ վիճակագրորեն նշանակալի ամենաբարձր միջին միավորների մեծ մասն արձանագրվել է անգլերենից և մաթեմատիկայից: Համեմատելով անգլերենի վիճակագրորեն նշանակալի ցուցանիշներն ըստ բուհերի՝ տեսնում ենք, որ առավել բարձր է եղել ՀՊՏՀ ընդունվածների միջին միավորը (12.2): Մաթեմատիկայի դեպքում ամենաբարձրը եղել է ՀԱՊՀ ընդունվածների միջին միավորը (10.7): Նկատենք, որ փոքրաթիվ մասնակիցներով քննությունների միջին միավորները, թեև բուհի կտրվածքով դիտարկվել են որպես վիճակագրորեն նշանակալի բարձր ցուցանիշ, այնուամենայնիվ, այլ բուհերի հետ համեմատելու դեպքում դարձել են ոչ նշանակալի:

Համեմատելով բուհերի նախապատրաստական դասընթացների ավարտական քննությունների և միասնական քննությունների միջին միավորները՝ տեսնում ենք, որ վերջինները հիմնականում եղել են ավելի բարձր, կամ երկու ցուցանիշները եղել են միմյանց գրեթե հավասար: Նախապատրաստական դասընթացի ցուցանիշի՝ միասնական քննության միջին միավորից ավելի քան 0.5 միավորի առավելություն է արձանագրվել քիմիայից՝ ԵՊՀ-ում, հայոց լեզվից և հայ գրականությունից՝ ՀԱՊՀ-ում, ՀՊՏՀ Գյումրու մասնաճյուղում և Գորիսի պետական համալսարանում:

5.2 ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՀԱՆՋԱՐԿԸ ԸՍՏ ՀՀ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ՈՒՍՈՒՑԱՆՎՈՂ ԱՌԱՐԿԱՆԵՐԻ

Աղյուսակ 8-ում ներկայացված են մանկավարժի որակավորում շնորհող պետական բուհերի (ՀՊՄՀ, ԵՊԼՀ, ՇՊՀ, ՎՊՀ)՝ հանրակրթական ուսումնական հաստատություններում ուսումնասիրվող հիմնական առարկաները ներկայացնող մասնագիտությունները հայտագրած և ընդունված դիմորդների թվերը:

Աղյուսակ 8. Հայտագրվածների և ընդունվածների թվերը մանկավարժի որակավորում շնորհող բուհերում

Մասնագիտությունը	Հայտագրված-ների թիվը	Ընդունված-ների թիվը	Ընդունված-ների տոկոսը	Մասնագիտա-կան քննության միջին միավորը
Անգլերեն լեզու և գրականություն	57	38	66.7	11.5
Հայոց լեզու և գրականություն	51	19	37.3	10.9
Պատմություն	41	22	53.7	10.2
Ռուսաց լեզու և գրականություն	28	14	50.0	12.5
Կենսաբանություն	25	7	28.0	
Մաթեմատիկա	14	9	64.3	
Աշխարհագրություն	7	3	42.9	
Ֆիզիկա	5	2	40.0	
Քիմիա	3	3	100	
Ընդամենը	231	117	50.6	

Աղյուսակում տեսնում ենք, որ այդ մասնագիտությունները հայտագրել է 231 դիմորդ (բոլոր հայտագրվածների 6.1%-ը): Նրանցից 149-ը (64.5%-ը) հայտագրել է «Անգլերեն լեզու և գրականություն», «Հայոց լեզու և գրականություն» ու «Պատմություն» մասնագիտությունները: Հայտագրված 231 դիմորդներից ընդունվել է 117-ը (բոլոր ընդունվածների 5.7 տոկոսը): Հիշատակված երեք մասնագիտություններով ընդունվել է 79 դիմորդ (բոլոր ընդունվածների 3.8%-ը):

5.5 ՀԱՅՏԱԳՐՎԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ԴԻՄՈՐԴՆԵՐԻ ՍԵՌԱՏԱՐԻՔԱՅԻՆ ԿԱԶՄԸ

2022 թ. հեռակա ուսուցման ընդունելության նպատակով dimord.am կայքում մասնագիտություն հայտագրած 3795 դիմորդներից 2198-ը (57.9%) եղել են արական սեռի ներկայացուցիչներ, 1597-ը (42.1%)՝ իգական սեռի: Ընդունված 2063 դիմորդներից 1144-ը (55.5%) եղել են արական սեռի, 919-ը (44.5%)՝ իգական (դիագրամ 1):

2022 թ. բուհերում առկա ուսուցման նպատակով մասնագիտություն հայտագրած դիմորդների սեռային կազմում գերակշռել է իգականը[6], մինչդեռ հեռակա ուսուցման դեպքում արձանագրվել է հակառակ պատկերը:

Դիագրամ 1. 2022 թ. բուհերի հեռակա ուսուցման դիմորդների սեռային կազմը



Դիագրամ 2. Բուհ ընդունված դիմորդների սեռատարիքային կազմը (%)



Դիագրամ 2-ում տոկոսային արտահայտությամբ ներկայացված է հեռակա ուսուցման նպատակով բուհ ընդունված դիմորդների սեռատարիքային կազմը: Ընդունվածների 44.5%-ը կազմած իգական սեռի տարիքային խմբերը ներկայացված են սեռատարիքային բուրգի ձախ կեսում, արական սեռինը (55.5%)՝ աջ կեսում:

Դիագրամից երևում է, որ ընդունվածների կեսից ավելին եղել են 2004 թ. ծնվածները, որոնց մեջ գերակշռել է արական սեռը:

2004 և 2005 թթ. ծնվածները եղել են 2022 թ. շրջանավարտներ: Իգական սեռի տոկոսն արականի համեմատությամբ գերակշռող է եղել միայն 2003 թ. և մինչև 1991 թ. ծնվածների խմբերում:

Հայտագրված դիմորդները եղել են 17-ից մինչև 67 տարեկան (իգական սեռը՝ 17-67, արականը՝ 17-52): Բուհ ընդունվածներից ամենաավագները երկու սեռերի դեպքում էլ եղել են 52 տարեկան:

5.6 ԱՄԵՆԱՊԱՀԱՆՋՎԱԾ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Աղյուսակ 9-ում ներկայացված են 2022 թ. հեռակա ուսուցման ընդունելության մրցույթի նպատակով հայտագրված դիմորդների շրջանում ՀՀ պետական բուհերի ամենապահանջված տասը մասնագիտությունները:

[6] «2022 թվականի միասնական քննությունների և բուհերի ընդունելության մրցույթի արդյունքները» , էջ 30 (http://www.atc.am/files/verlucutyunner/2022%20miasnakan%20verl./%D5%84%D4%BB%D4%B1%D5%8D%D5%86%D4%B1%D4%BF%D4%B1%D5%86%20%D5%94%D5%86%D5%86%D5%88%D5%92%D4%B9%D5%85%D5%88%D5%92%D5%86%D5%86%D4%B5%D5%90%20%D4%B5%D5%8E%20%D5%84%D5%90%D5%91%D5%88%D5%92%D5%85%D4%B9%20-%202022.pdf)

Աղյուսակ 9. 2022 թ. հեռակա ուսուցման ընդունելության մրցույթի ամենապահանջված մասնագիտությունների տասնյակը

Բուհը [1]	Մասնագիտությունը	Դիմում-ների թիվը	Տեղերի թիվը	Ընդուն-վածների թիվը [2]
ՀՊՏՀ	Ֆինանսներ (ըստ ոլորտի)	156	190	109
ՀՊՏՀ	Կառավարում (ըստ ոլորտի)	111	110	75
ՀՊՏՀ	Շուկայագիտություն (մարքեթինգ) (ըստ ոլորտի)	88	75	52
ՀԱՊՀ	Տեղեկատվական տեխնոլոգիաներ	86	50	46
ՀԱԱՀ	Ագրոբիզնես և ֆինանսներ	81	138	37
ՀՊՄՀ	Հոգեբանություն	75	90	27
ԵՊՀ	Իրավագիտություն	72	40	42
ՀՖԿՍՊԻ	Մասնագիտական մանկավարժություն-Փրկարարական գործ	70	55	63
ՀՊՏՀ	Տնտեսագիտություն	66	100	44
ՀՊՏՀ	Հաշվապահական հաշվառում և հարկում (ըստ ոլորտի)	64	125	37
Ընդամենը	թիվը	**869**	**973**	**532**
	տոկոսը ամբողջից	**22.9**	**12.6**	**25.8**

[1]- Երևանում գործող բուհերի տվյալներում ընդգրկված չեն մարզերում գործող մասնաճյուղերի տվյալները:
[2]- Ընդունվածների թիվը որոշ մասնագիտությունների դեպքում մեծ է նախատեսված տեղերի թվից, քանի որ դրանցում ներառված են նաև արտոնություններով և ԿԳՄՄՆ ավելացրած տեղերով (հավասար միավորների դեպքում) ընդունվածների թվերը:

Աղյուսակ 9-ում տեսնում ենք, որ 2022 թ. հեռակա ուսուցման մրցույթին մասնակցելու նպատակով հայտագրված 3795 դիմորդների համար ամենապահանջված տասը մասնագիտություններից հինգը եղել են տնտեսագիտական մասնագիտություններ: Ամենապահանջված մասնագիտությունների տասնյակն ընտրել է 869 դիմորդ (բոլոր հայտագրվածների 22.9%-ը): Առաջատար եռյակում եղել են տնտեսագիտական մասնագիտություններ, որոնցից առաջինը ըստ դիմումների թվի եղել է ՀՊՏՀ «Ֆինանսներ» մասնագիտությունը: Վերջինս առաջին հայտով ընտրել է 156 դիմորդ (բոլոր հայտագրվածների 4.1%-ը):

Դիտարկված տասնյակից ամբողջությամբ լրացել են միայն ԵՊՀ «Իրավագիտություն» և ՀՖԿՍՊԻ «Մասնագիտական մանկավարժություն-Փրկարարական գործ» մասնագիտությունների ընդունելության նպատակով հատկացված տեղերը: Մնացած ութ մասնագիտությունների համար հատկացվածներից ամենաշատը լրացել են ՀԱՊՀ «Տեղեկատվական տեխնոլոգիաներ» (50-ից 46-ը), ամենաքիչը՝ ՀԱԱՀ «Ագրոբիզնես և ֆինանսներ» (138-ից 37-ը) մասնագիտությունների տեղերը:

Հայտագրվածների թվով առաջատար մասնագիտությունների տասնյակում ընդունվածները կազմել են բոլոր ընդունվածների 25.8%-ը:

ԱՄՓՈՓՈՒՄ

2022 թ. ՀՀ պետական բուհերի հեռակա ուսուցման ընդունելության նպատակով հատկացվել է 7726 վճարովի տեղ: Հատկացված տեղերի 80%-ի մրցույթն այս տարի առաջին անգամ անցկացրել է ԳԹԿ-ն, 20%-ը՝ բուհերը, որոնք նախապես կազմակերպել են նախապատրաստական դասընթացներ և դրանց ավարտական քննությունների արդյունքներով անցկացրել ընդունելության մրցույթը:

Ընդունելության մրցույթին մասնակցելու համար դիմորդները կա՛մ հանձնել են քննություն, կա՛մ պահպանելով տվյալ առարկայի քննությունից նախկինում ունեցած միավորը՝ կրկին հանձնել են քննություն, կա՛մ պահպանել են ունեցած միավորը: Դիմորդների այն մասը, որը մասնակցել է նախապատրաստական դասընթացներին, սակայն չի ընդունվել բուհի անցկացված մրցույթով, հանձնել է (կամ պահպանել է նախկին միավորը) քննություն և մասնակցել ԳԹԿ-ի անցկացրած մրցույթին:

2022 թ. սեպտեմբերի 5-25-ն ընկած ժամանակահատվածում ԳԹԿ dimord.am կայքում իրականացվել է ՀՀ պետական բուհերի հեռակա ուսուցման ընդունելության քննությունների և մասնագիտությունների հայտագրումը: Դիմորդները հայտագրել են մեկ բուհի մինչև երեք մասնագիտություն, որոնց համար սահմանված են եղել ընդունելության միևնույն քննությունները: «Ընդունելության քննություններ» բաժնի սյունակում միասնական քննությունների առարկաները «կամ» բառով տարանջատված լինելու դեպքում նրանց թույլատրվել է ընտրել նշված քննություններից մեկը:

Հեռակա ուսուցման ընդունելության նպատակով միասնական և ներբուհական քննություններ է հայտագրել 3795 դիմորդ (3204-ը՝ միասնական, 591-ը՝ ներբուհական քննություններ հանձնելու համար): 555 դիմորդ դիմում-հայտում նշել է երկու ներբուհական քննություն, 36-ը ներբուհական մեկ քննության հետ միասին հայտագրել է մեկ միասնական քննություն: Ուստի, մեկ կամ երկու միասնական քննություն է հայտագրել 3240 դիմորդ:

Հայտագրված դիմորդներից 68-ը եղել են այլ երկրների քաղաքացիներ:

2446 դիմորդ եղել է 2022 թվականի, 1349-ը՝ նախորդ տարիների շրջանավարտ:

➢ ***Միասնական քննություններ:*** Հեռակա ուսուցման ընդունելության նպատակով 2022 թ., ինչպես նշվեց վերևում, առնվազն մեկ միասնական միասնական քննություն է հայտագրել 3240 դիմորդ:

Միասնական քննություններն անցկացվել են հոկտեմբերի 20-ից 27-ը: Ամենաշատ հայտերը եղել են «Մաթեմատիկա» առարկայից (1264 հայտ):

Միասնական քննությունների միջին միավորները բաշխվել են 4.9-ից (ֆիզիկա) մինչև 10.2 (ֆրանսերեն) սահմաններում: Դրական միավորի շեմը չհաղթահարած դիմորդների ամենաբարձր տոկոսն արձանագրվել է ֆիզիկայից (82.7%), 18-20 միավոր հավաքածներինը՝ հայոց պատմությունից (3.6%): Բոլոր քննություններից «Անբավարար» գնահատական ստացածները կազմել են ավելի քան 10%:

Իգական սեռի դիմորդների հավաքած միջին միավորները հիմնականում բարձր են եղել տվյալ քննության ընդհանուր միջին և արական սեռի դիմորդների հավաքած միջին միավորներից:

Քննություն հանձնած դիմորդների միջին միավորները ցածր են եղել նախորդ քննաշրջանից միավոր պահպանածների խմբի ցուցանիշներից: Քննություն հանձնածների խմբում իգական սեռի դիմորդների ամենաբարձր միջին միավորն արձանագրվել է աշխարհագրությունից և գերմաներենից (9.8), ամենացածրը՝ ֆիզիկայից (6.1), արական սեռինը, համապատասխանաբար, աշխարհագրությունից (8.6) և քիմիայից (4):

Միավոր պահպանած դիմորդների խմբում երկու սեռերի ամենաբարձր միջին միավորն արձանագրվել է հայոց պատմությունից (իգական սեռինը՝ 13.9, արական սեռինը՝ 13.2): Ամենացածր միջին միավորն իգական սեռի խմբում արձանագրվել է ֆիզիկայից (8.1), արականում՝ քիմիայից (8.9):

Նախկին միավորը պահպանելով քննություն հանձնած դիմորդներից իգական սեռի ամենաբարձր միջին միավորը եղել է անգլերենից, արական սեռինը՝ հայոց պատմությունից: Ամենացածր ցուցանիշը երկու սեռերի դեպքում էլ եղել է հայոց լեզվից և հայ գրականությունից (իգական՝ 12.5, արական՝ 11.1):

Նախապատրաստական դասընթացներին մասնակցածների խմբում երկու սեռերի ամենաբարձր ցուցանիշն արձանագրվել է հայոց լեզվից և հայ գրականությունից (իգական՝ 11.2, արական՝ 11.0), ամենացածրը՝ ֆիզիկայից (իգական՝ 9, արական՝ 8.9):

➢ ***Բուհերի ընդունելության մրցույթը:*** 2022 թ. ՀՀ բուհերում բակալավրի կրթական ծրագրով հեռակա ուսուցման ընդունելության նպատակով ԳԹԿ-ի կողմից անցկացվող մրցույթի ցանկում ընդգրկված պետական բուհերին պետության կողմից տրամադրվել է 7726 վճարովի տեղ:

ԳԹԿ-ն անցկացրել է ընդունելության համար սահմանված երկու քննություններից առնվազն մեկ միասնական քննություն պահանջող մասնագիտությունների ընդունելության մրցույթը: Մեկից ավելի ներբուհական քննություններ պահանջող մանագիտությունների և բուհերի նախապատրաստական դասընթացների ավարտական քննությունների արդյունքներով ընդունելության մրցույթն անցկացրել են բուհերը:

Բուհերի հեռակա ուսուցման ընդունելության մրցույթին մասնակցելու նպատակով dimord.am կայքում ս/թ սեպտեմբերի 5-ից մինչև 25-ը ներառյալ դիմորդները լրացրել են դիմում-հայտ՝ նշելով մեկ բուհի մինչև երեք մասնագիտություն, որոնց համար սահմանված են եղել ընդունելության միևնույն քննությունները: Հայտագրվել է 3795 դիմորդ, որոնցից 605-ը (15.9%) դիմում-հայտում կատարել է նշում 45-րդ կետի արտոնության վերաբերյալ:

Բուհերի հեռակա ուսուցման ընդունելության մրցույթի արդյունքները հրապարակվել են 2022 թ. հոկտեմբերի 30-ին: Ընդունելության մրցույթը հաղթահարել է 2063 դիմորդ (հայտագրվածների 54.4%-ը), որոնցից ընդհանուր մրցույթով ընդունվել են 1482-ը, բուհերի նախապատրաստական դասընթացների ավարտական

քննությունների արդյունքներով՝ 512-ը, արտոնություններով՝ 69-ը: Երկու քննություններից ունեցած դրական գնահատականներով մրցույթից դուրս է մնացել 11 դիմորդ:

Հայտագրված և ընդունված դիմորդների թվով առաջին տեղում է եղել ՀՊՏՀ-ն (համապատասխանաբար՝ 519 և 338 դիմորդ):

Հանրակրթական ուսումնական հաստատություններում ուսումնասիրվող առարկաներից բարձրագույն մասնագիտական կրթություն ստանալու գծով մանկավարժի որակավորում շնորհող բուհերում առաջին հայտով հայտագրված դիմորդները կազմել են հայտագրված բոլոր դիմորդների 6.1 տոկոսը (231 դիմորդ): Ընդունվել է 117 դիմորդ (ընդունվածների 5.7%-ը):

2022 թ. բուհերի հեռակա ուսուցման ընդունելության մրցույթին մասնակցելու նպատակով հայտագրված դիմորդների համար ամենապահանջված տասը մասնագիտություններից հինգը եղել են տնտեսագիտական մասնագիտություններ: Ամենապահանջված մասնագիտությունների տասնյակն ընտրել է բոլոր հայտագրվածների 22.9%-ը: Տասնյակում առաջատար են եղել տնտեսագիտական մասնագիտությունները, որոնցից առաջինը, ըստ դիմումների թվի, եղել է ՀՊՏՀ «Ֆինանսներ» մասնագիտությունը: Նշված տասնյակում ընդունելության նպատակով հատկացված տեղերից ամբողջությամբ լրացել են միայն ԵՊՀ «Իրավագիտություն» և ՀՖԿՍՊԻ «Մասնագիտական մանկավարժություն-Փրկարարական գործ» մասնագիտությունների տեղերը:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ

1. 2022 թ. միասնական քննությունների, ինչպես նաև բուհերի հեռակա ուսուցման ընդունելության մրցույթի դիմորդների հաշվառման էլեկտրոնային տվյալների բազաներ
2. Հայաստանի Հանրապետության պետական և հավատարմագրված ոչ պետական բարձրագույն ուսումնական հաստատություններում բակալավրի կրթական ծրագրով հեռակա ուսուցման ընդունելության կանոններ (https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=166688)
3. ՀՀ պետական բարձրագույն ուսումնական հաստատությունների 2022/2023 ուսումնական տարվա բակալավրի կրթական ծրագրով հեռակա ուսուցման ընդունելության տեղերը ըստ բուհերի և մասնագիտությունների (https://escs.am/files/files/2022-08-11/a9b3f3ac06475b3f8532679c033f30b1.pdf)